

դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած, քաղ-մահագար հայերի երգազանքը՝ նրանց վերջնականապես ամրացնելով որդեգրած Նոր Երկրին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] *Malcom V.M. The Armenians in America.* Boston, Chicago, 1919, pp. 52, 56-57. J.H.Tashjian. *The Armenians of the United States and Canada.* Boston, 1947, pp. 3, 7-12. V.Wertsman. *The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book.* New York, 1978, p. 1.
- [2] *Ճիգմեճեան Մ.Գ.* Խարբերք եւ իր գաւակները, Ֆրեզնո, 1955, էջ 103: Դակատագրական դէպքեր հայ պատմութեան մէջ, ա.տ., ա.թ., էջ 83:
- [3] *Tashjian J.H.*, նշվ. աշխ., էջ 13-14: Մուշեղ Յայկոյան, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 16-18:
- [4] *Մուշեղ Յայկոյան*, նշվ. աշխ., էջ 27, 30:
- [5] *Mirak R. Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I.* Cambridge, 1983, p. 37.
- [6] *Մուշեղ Յայկոյան*, նշվ. աշխ., էջ 26, 28: *Mirak R.*, նշվ. աշխ., էջ 36, 40:
- [7] *Մուշեղ Յայկոյան*, նշվ. աշխ., էջ 211: Մանկունի Ն.Լ., Ամերիկահայ գաղութի պատմությունից, «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1962, քիվ 1, էջ 104: *Mirak R.*, նշվ. աշխ., էջ 42, 43:
- [8] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., էջ 95: *R.Mirak*, նշվ. աշխ., էջ 288: *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 66:
- [9] *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 64-66, 76: *The Armenian Image in History and Literature*, ed. Hovannisian R., Malibu. 1981, p. 255: Մանկունի Ն.Լ., Ամերիկահայ մարդասիրող (Թեոփիլ, Ամեմոն տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 586): *Mirak R.*, նշվ. աշխ., 1983, էջ 46, 47, 290: *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 65, 66:
- [10] *Mirak R. Armenians* (Harvard Encyclopedia of American Ethnic Groups, ed. S.Thernstrom. Cambridge, London, 1981, p. 139). *Mirak R.*, նշվ. աշխ., էջ 49, 57-58: Գալտեան Ս., Շիրակի հայերի գաղթը դէպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 65, 72, 58, 76, 101: Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 586:
- [11] *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 65: Արշալոյս պատկերագրող տարեգիրք, Ա տարի, Ֆրեզնո, 1922, էջ 47: Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585: *The Armenian Image in History and Literature*, էջ 255:
- [12] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., 1926, էջ 585: *Harvard Encyclopedia of American Ethnic Groups*, էջ 139:
- [13] *Danilov D.P. Immigrating to the U.S.A. Canada*, 1983, p. XVIII. A.S.Yeretzian. *A History of Armenian Immigration to America with Special Reference to condition in Los Angeles.* A Thesis. California, 1923, p. 18. Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585, 589: *Harvard Encyclopedia of American Ethnic Groups*, էջ 139:
- [14] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., 1926, էջ 589: *Mirak R.*, նշվ. աշխ., 1983, էջ 290:

## ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ԵՎ 1915-1916ԹԹ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԸՍՏԱԸՍԿԱՆ ՍՈՏԵՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

### Մարտիրյան Ա.

#### ՀՀ ԳՍԱ հայոց ցեղասպանության քանդարան-ինստիտուտ

#### Марукян А. Россия и геноцид армян 1915-1916гг.: Политические подходы и позиции.

Политика России во время геноцида армян в 1915-1916гг. не была однозначна: она имела колебания и зигзаги. Это объяснялось политической борьбой двух противостоящих течений в правительстве России: армянофильской и армянофобской. Политика России определялась в зависимости от того какое из этих течений одерживало победу в определенном историческом отрезке времени.

**Maroukian A. Russia and Armenian Genocide of 1915-1916. Political Approaches and Positions.** The policy of Russia during the Armenian genocide in 1915-1916 was not simple; it had many oscillations and zigzags. It was explained of political fighting of two tendencies in Russian government: proarmenian and antiarmenian. The policy of Russia was depended on victory of one of these tendencies in the definite historical time.

Բավական երկար ժամանակ ընդունված էր այն տեսակետը, որ Հայոց Յեղասպանության հարցում Ռուսաստանի դիրքորոշումը եղել է կամ հայամալաստ, կամ հակահայկական: Այնինչ Ռուսաստանի քաղաքականությունը Մեծ եղեռնի տարիներին չի սանձանախակվել լոկ ճշված ձևակերպումներով, քանզի ռուսական դիրքորոշումը 1915-1916թթ. Հայկական հարցում կրել է տատանողական բնույթ: Դրանք արդյունք էին այն պայքարի, որն ընթանում էր Ռուսաստանի տարբեր պետական գերատեսչությունների միջև Հայկական հարցի շուրջ: Պայքարի առանցքում ընկած էր հայերին վստահեղ-վստահելու հարցը: Գերատեսչությունների պայքարում առանձնացել են երկու հոսանք՝

1. Հայամալաստ հոսանքը գտնում էր, որ հայերը արժանի են վստահության, քանի որ միշտ հավատարիմ են եղել Ռուսաստանին, ուստի նրանց շահերն ու ցանկությունները ամսպայման պետք է հաշվի առնել, քանի որ դրանք բխում են նաև Ռուսաստանի պետական շահերից:

2. Հակահայկական հոսանքը նշում էր, որ պետք է վստահել հայերին, քանզի կարող է կրկնվել Բուլղարիայի նախադեպը և հայերը երես կթեքեն Ռուսաստանից, ուստի Հայկական հարցը պետք է լուծել միայն ելնելով Ռուսաստանի ծավալարտաշտական նպատակներից:

Ժամանակակիցների վկայությամբ Նիկոլայ II-ը կամքից թույլ անձնավորություն էր և կարծիք կար, որ նա որոշումներ էր ընդունում այս կամ այն գործի ազդեցության տակ: Ցարը իր տեսակետները փոխում էր սարսափելի արագությամբ [1]:

Մասնավորապես Հայկական հարցում Նիկոլայ II-ը ընկնում էր մեկ հայամալաստ, մեկ հակահայկական հոսանքների ազդեցության տակ: Ըստ էության, Հայկական հարցում 1915-1916թթ. քաղաքականությունը վարվում էր ելնելով այն հանգամանքից, թե ուվյալ պահին ճշված հոսանքներից որն էր հաղթող դուրս գալիս: Մեծ մասամբ հաղթում էր հակահայկական հոսանքը, և թեև հայամալաստ հոսանքը պայքարում էր համեմատաբար արդար մեթոդներով, սակայն հակահայկականը կանգ չէր առնում կեղծիքի, հերյուրանքների և վարկարեկումների առջև: Ինչ վերաբերում է հայկական հոսանքին, սակայն միջգերատեսչական պայքարում այս հոսանքի դեկավարները հայասեր էին այնքանով, որքանով դա բխում էր Ռուսաստանի պետական, կամ էլ տվյալ անհատի մեղ անձնական շահերից: Իհարկե, հայասիրությունը հարաբերական հասկացություն էր տարբեր գերատեսչությունների համար, և այս կամ այն պետական գործի կամ գերատեսչության հայամալաստ դիրքը պարզվում էր՝ այլ գործիչների ակնհայտ հակահայկական պահվածքի համեմատությամբ:

Հայանապատ հոսանքի ղեկավարումը ի սկզբանե իր վրա է վերցնում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը՝ ի դեմս նախարար Ս.Սազոնովի: Դեռևս մինչև պատերազմը Սազոնովի ակտիվ ջանքերով ու նրա անմիջական համձնարարությամբ մշակվեց և ծանր դիվանագիտական պայքարից հետո 1914թ. հունվարի 26-ին ստորագրվեց բարենորոգումների ծրագիրը: 1910թ. դառնալով արտգործնախարար, Սազոնովը բավականին հաճախ էր շփվում հայ գործիչների հետ [2]: Այդ շփումների արդյունքում էր, որ նա ամբողջովին լծվեց Հայկական հարցի լուծման գործին, որում որոշակի տեղ և դեր էր հատկացնում հայերին: Նա գտնում էր, որ հայերի անկախությունը Արևմտյան Հայաստանում կարևոր և անհրաժեշտ էր Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման համար:

Ռուսաստանի տարբեր գերատեսչությունների դիրքորոշումը Հայկական հարցում բացահայտվում է՝ նրանց քայլերը և միմյանց հետ շփումները ուսումնասիրելու ճանապարհով:

Դեռևս 1915թ. փետրվարի 28-ին երկրագործության նախարար Կրիվոշեինը հատուկ նամակով դիմել է արտգործնախարար Ս.Ռ. Սազոնովին, վերջինիս ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, թե ժամանակն է՝ ձեռնամուխ լինել օսմանյան Թուրքիայից գրավված հողային տարածքների վերաբերյալ ղեկավարման դրույթների մշակմանը: Կրիվոշեինի այս ծրագիրը համաձայնեցված էր ռազմական նախարարության և առավելապես Կովկասյան բանակի հրամանատարության հետ [3]: 1915թ. ապրիլի 5-ին Կովկասյան բանակի հրամանատար զեներալ Յուդենիչը Կովկասի փոխարքա Վորոնցով-Գաշկովին ներկայացրեց զեկուցագիր, որն էլ ավելի էր զարգացնում Կրիվոշեինի գաղափարը և առաջարկում էր՝ «ելնելով ռուսական շահերից և չափազանց ցանկալի համարելով սահմանագծի վայրը բնակեցնել ռուսական տարրով, Արևմտյան Հայաստանի արդեն գրավված Ալաշկերտի, Դիառիների և Բայազետի հովիտներում բնակեցնել Կուբանից ու Դոնից գաղթածներով և այս հովիտներում կազմել սահմանամերձ կազակություն» [4]: Կրիվոշեինը և Յուդենիչը լավ հասկանում էին, որ առանց արտգործնախարարի և Կովկասի փոխարքայի այս խնդրի լուծումը հնարավոր չէ, քանզի կառավարությունում որոշում կայացնելուց առաջ անպայման պետք է հարցնեին վերջիններիս կարծիքը: Վորոնցով-Գաշկովը հաստատեց այս զեկուցագիրը, որը հետագայում վերագրվում էր զեներալ Յանուշևիչին՝ ելնելով հայերի հանդեպ վերջինիս ապացուցված անբարյացկամությունից [5]:

Վորոնցով-Գաշկովն, ընդհանրապես, շատ խորամանկ և ճկուն քաղաքական գործիչ էր և անընդհատ խոստանալով էր հայամետ և հակահայկական հոսանքների միջև, նրան միշտ հաջողվում էր կռահել ղեկավարների ընթացքը և հայտնվել հարթող հոսանքի ճամբարում: Այս անգամ ևս նա կռահեց, որ հակահայկական հոսանքի այս ծրագիրը, անկախ նրա դիրքորոշումից, պետք է հավանության արժանանալ կառավարության և կայսրի ուշադրությանը, ուստի ավելի շահավետ էր խրախուսել այս ծրագրի իրագործումը՝ անբարենպաստ վիճակում չհայտնվելու համար:

Փոխարքայի կերպարը առավել ցայտուն է բնութագրում Ջ. Կիրակոսյանը. «Վորոնցով-Գաշկովը ժպտալով ուղեկցում էր հայ ազգային ներկայացուցիչներին մինչև իր աշխատասենյակի դուռը և նույն ժպիտով երկրորդ դռան մոտ դիմավորում էր բուրդ առաջնորդներին» [6]:

Հայկական հարցում անբարենպաստ դեր էին խաղում ներքին գործերի նախարարությունը և Կովկասում նրա գործակալները: Գաղտնի ոստիկանության ղեկավարները հմտորեն օգտագործում էին առանձին պետական այրերի միջև եղած բախումներն ու բարդ հարաբերությունները: Զժներով բարձրագույն իշխանության առջև, նրանք պարտաստ էին սևացնել այն ռուս պետական գործիչներին, որոնք քիչ թե շատ մեղմ քաղաքականություն էին վարում Կովկասում՝ կամավորական շարժման և հայ ժողովրդի նկատմամբ: Գործակալները կամզ չէին առնում ոչնչի առջև, որպեսզի վարկաբեկեն Վորոնցով-Գաշկովին, որի դեմ էին միավորվել պետական քարտուղար Մտուլիայինը, ռազմական նախարար Մուխոմիլցկին, Գլխավոր շտաբի պետ Յանուշևիչը [7]:

Վորոնցով-Գաշկովը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, քաջ գիտակցում էր, որ Յուդենիչի զեկուցագրին բացասական պատասխանելու դեպքում այդ փաստը անպայման կօգտագործվի իր դեմ: Առաջ անցնելով նշենք, որ, չնայած Վորոնցով-Գաշկովի բոլոր զգուշավորություններին, նրան չհաջողվեց պահպանել իր պաշտոնը և շուտով Կովկասի փոխարքա նշանակվեց Նիկոլայ Նիկոլակիչը:

Ոստիկանության ղեկավարամետերը իր բոլոր սաղորիչ նյութերն անփութված տեսքով և համապատասխան եզրակացություններով ներկայացնում էր ոչ միայն ցարին, այլև Գլխավոր շտաբի գլխավորին՝ կողմնորոշվելու և համապատասխան միջոցներ կիրառելու համար:

Բարձրագույն հրամանատարությունն այս ամենն ընդունում էր որպես բացարձակ ճշմարտություն և շատ հաճախ դրանց հիման վրա է դրսևորել իր վերաբերմունքը հայ կամավորական ջոկատների նկատմամբ [9]: Միայն է կարծել, սակայն, որ զինվորականությունը և ռազմական նախարարությունը գտնվում էին միայն ներքին գործերի նախարարության գործակալների ինֆորմացիայի ազդեցության տակ: Ռազմական նախարարությունը և Գլխավոր շտաբը քարացած կարծիք ունեին Կովկասյան ճակատի մասին ընդհանրապես և Հայկական հարցի վերաբերյալ մասնավորապես:

Կովկասյան ճակատը, նրանց կարծիքով, ուներ երկրորդական և թուրքերից պաշտպանվելու նշանակություն: Դեռևս 1915թ. ռուսական բանակի Գլխավոր շտաբի աշխատակից, զեներալ Կորոտայասկինը կազմեց Արևմտյան Հայաստանի ապագա վարչական կազմավորման նախագիծը, ըստ որի պատերազմի իրավունքով գրավված հայկական վիլայեթները պետք է դառնային ցարական Ռուսաստանի սովորական մահանգներ [10]: Այս իմաստով, ռազմական նախարարությանն անհրաժեշտ էր այնպիսի ինֆորմացիա, որը համապատասխաներ բարձրաստիճան հրամանատարական կազմի մոտ արմատավորված դոգմաներին:

Առանձին զեներալներ և սպաներ, թշնամական դիրք գրավելով հայ կամավորական ջոկատների նկատմամբ, երբեմն վերջիններիս վերագրում էին այնպիսի բաներ, որոնց հետ նրանք առնչություն չունեին: Այս զեկուցագրերն ու բողոքները ստուգման ժամանակ, որպես կանոն, չէին հաստատվում:

Միաժամանակ պետք է նշել, որ այն գնահատականները, որոնք արվում էին կամավորական ջոկատներին Կովկասյան ճակատում անմիջականորեն կովող զինվորավորումների հրամանատարների կողմից, էականորեն տարբերվում էին ներքին գործերի նախարարության և կողմնապահ զինվորական չինովնիկների գնահատականներից [8]:

Նրանք ջերմ գովեստի խոսքեր էին ուղղում հայ կամավորական ջոկատների հասցեին և խոստովանում, որ այդ ջոկատներն էապես հեշտացնում են ռուսական զորքերի առաջխաղացումը Կովկասյան ճակատում:

Այսպիսով, հենց ռուսական զինվորականության մեջ ըմբռնում էր հայանպաստ և հակահայկական հոսանքների պայթյալը: Որպես կանոն, հակահայկական հոսանքը ներկայացնում էին բարձրաստիճան սպաները, իսկ հայանպաստը միջին և ցածր սպայական կազմը: Այս պայթյալում ևս հիմնականում հաղթում էր հակահայկական հոսանքը, հաճախ չարաշահելով զինվորական բարձր կոչումներն ու պաշտոնական դիրքը, իսկ հայանպաստ հոսանքի կողմնակիցները հիմնականում ստիպված էին ենթարկվել բարձրաստիճան հրամանատարներին և կատարել իրենց խղճին հակառակ հրահանգներ:

1915թ. նոյեմբերի 29-ին Ռուսաստանի արտոգործնախարար Սազոնովը նամակ է ուղարկում ֆինանսների նախարար Բարկին, որով խնդրում էր վերջինիս եզրակացությունը՝ պետական զանձարանից թուրքահայերին օգնություն ցույց տալու նպատակով 500000 ռուբլի հատկացնելու և այդ գումարը հայկական պատրիարքարանի համաձայնությամբ ծախսելու համար, Կ. Պոլսում ամերիկյան դեսպանին փոխանցելու հարցի վերաբերյալ [11]: Ի պատասխան Սազոնովի նամակի Բարկը գրում է. «Տվյալ դեպքում ես առավել ևս դժվարանում եմ համաձայնություն հայտնել նշված գումարը բաց թողնելու հարցին, մասնավորապես որ այդ գումարը նախատեսվում է փոխանցել բջճամական երկիր՝ քջնամուտ հայատակներին օգնություն ցույց տալու նպատակով (ընդգծումը Ա.Մ.)» [12]: Արևմտահայերին «քջնամուտ հայատակներ» գնահատականը տալով, ֆինանսների նախարարը դրանով իսկ արդեն արտահայտում է իր դիրքորոշումը Հայկական հարցում: Ստանալով Բարկի ղեկավարների 18-ի նամակը՝ Սազոնովը ղեկավարների 20-ին նոր նամակ է ուղարկում նրան, որտեղ ասված է. «Պարտավորվում եմ Ձեր գերազանցությանը հաստատելու, որ իմ կողմից հայցվող վարկը նվազ է, իմ կարծիքով, ռուսական պետական շահերից, ինչը պահանջում է թուրքահայերի վրա մեր ազդեցության հետագա ամրապնդումը, խոսքը նրանց մասին է, ովքեր տուժել են մասամբ նաև Ռուսաստանին միևնույն պատճառով և չեն կարող հավասարեցվել Թուրքիայի մյուս հայատակներին» (Ա.Մ.) [13]: Գեկտեմբերի 21-ին կայացած միջգերատեսչական խորհրդակցությունում ֆինանսների նախարարության և պետական վերահսկողության ներկայացուցիչները գտնելով, որ թուրքահայերին դրամական օգնություն ցույց տալը բոլոր դաշնակիցների գործն է, դեմ արտահայտվեցին Ռուսաստանի կողմից 500000 ռուբլի արևմտահայերին տրամադրելուն, դա պատճառարանելով նրանով, որ «կատարության տրամադրության տակ եղած օտարերկրյա տարադրամը չի բավարարում մինչև իսկ պաշտպանությանը հատկացվող ծախսերը ծածկելու համար» [14]: Այս տեսակետի հետ չհամաձայնվեցին արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները: Խորհրդակցությունը անհրաժեշտ համարեց հարցի լուծումը հանձնել նախարարների խորհրդին: Հարցը այդպես էլ մնաց չլուծված, և նախարարների խորհուրդը պատշաճ ուշադրություն չդարձրեց դրան:

Գնահատելով 1916թ. կեսերին արևմտահայերի հարցի նկատմամբ ստեղծված իրավիճակը՝ Սազոնովը ցանկություն հայտնեց իմանալ կատարաբար շրջաններում տիրող տրամադրությունների ազդեցության չափը Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլակիչի վրա: 1916թ. հունիսի 14-ին Սազոնովը գրում է Կովկասի փոխարքային. «Մեր գործերի կողմից գրեթե ամբողջ Մեծ Հայքի գրավումը և այն Ռուսական կայսրության սահմանների մեջ առաջիկա ներառումը հերթի դնում են նաև այդ մարզի ապագա կառուցվածքի հարցը» [15]: Սազոնովը իր նամակում ներկայացնում է Հայկական հարցի լուծման երկու իրարամերժ մոտեցումներ, որոնք, ըստ էության, այն տեսակետներն էին, որոնք առաջ էին քաշում հայանպաստ և հակահայկական հոսանքները: «Ինչպես հայտնի է, - գրում է նախարարը, - ծայրահեղ ժողովուրդները, որոնց միջև մեզանում դրվում է Հայկական հարցի լուծումը, հանդիսանում են երկու հոսանքներ (Ա.Մ.)» Դրանցից մեկը հայ ազգայնականների ճգնումն է 1913թ. մեր առաջարկած բարենորոգումների ոգուն համապատասխան Ռուսաստանի հովանու տակ հասնել կատարյալ ինքնավարության, իսկ մյուսը, որը հակադիր է սրան, հայերի քաղաքական նշանակությունը ճգնում է հավասարեցնել գրոյի և փորձ է անում նրանց տեղը զիջել մահմեդականներին» [16]:

Այս երկու տեսակետները Սազոնովը գնահատում է որպես ծայրահեղ մոտեցումներ և փորձում է հաշտեցնել, շփման եզրեր գտնել այս տեսակետների միջև: Նա առաջ է քաշում հայերին սահմանափակ իրավունքներով ինքնավարություն տալու հարցը. «Այս ձևով հնարավոր կլինի հայերին, որոշակի սահմաններում, վերապահել դարձողական և եկեղեցական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ» [17]:

Նամակի վերջում Սազոնովը փոխարքային առաջարկում է «խտազույն հետաքննության ենթարկել վերջին ժամանակներում տեղի ունեցած այն բազմաթիվ դեպքերը, երբ մահմեդականները ինքնակամ զավթել են արտաքսված կամ սպանված հայերի ունեցվածքը» [18]:

1916թ. հուլիսի 3-ին Նիկոլայ Նիկոլակիչը պատասխանում նամակ է ուղարկում Սազոնովին, որտեղ լիովին համաձայնվում է նրա կարծիքների և տեսակետների հետ: Մա նշանակում էր, որ Սազոնովը իր դիվանագիտական կարողությունների ճնորհիվ կարողացել է, այնուամենայնիվ, հարթեցնել Կովկասի փոխարքայի իրարամերժ և հակասող տեսակետները և նրան այս հարցում դարձնել իր համախոհը:

Ինչպես Սազոնովի նամակը, այնպես էլ Նիկոլայ Նիկոլակիչի պատասխանում նամակը պատմագրության մեջ ուսումնասիրվել են հատվածաբար և միակողմանի, այնինչ անհրաժեշտ է դրանք դիտարկել ամբողջությամբ: Մյուս կողմից՝ այս երկու նամակները չի կարելի դիտարկել առանձին-առանձին, քանզի դրանք փոխկապակցված են և միմյանց լրացնում են:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի օրենսդիր մարմնին՝ Պետական դումային, պետք է նշել, որ ընդհանրապես մեծ հակամարտություն կար խորհրդարանի և կառավարության միջև:

Պետական դումայում անընդհատ քննադատության էր ենթարկվում կառավարության վարած քաղաքականությունը պատերազմի ընթացքում: Այս խնաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Վազոնովի ելույթը Պետական դումայում 1916թ. փետրվարի 9-ին, որը բուռն քննարկման առարկա դարձրեց Հայկական հարցը Ռուսաստանի օրենսդիր մարմնում: Նա իր ելույթում մասնավորապես ասաց. «Վանից մեր գաղթի մահանջից հետո ընկած ժամանակահատվածում թուրքերը տասնապատկեցին իրենց դաժանությունները հայերի նկատմամբ: Ես մախիմում դեռևս պատիվ եմ ունեցել ներկայացնել այդ դժբախտ ժողովրդի անասելի տառապանքները: Գերմանիայի բարեհաճ աջքի առջև թուրքերը, ըստ երևույթին, մտադիր են իրականացնել իրենց վաղեմի երազանքը՝ հայ բնակչության ամբողջական բնաջնջման մասին, որը չի ենթարկվում մահմեդականների ազդեցությանը, և այդպիսով արգելակում է Գերմանիայի պլանները՝ Թուրքիայի տնտեսական և քաղաքական տիրապետմանն ուղղությամբ» [20]:

Արտաքին գործերի նախարարության նախահաշվարկը քննարկելու ժամանակ Պետական դուման մեծ ուշադրություն դարձրեց Հայկական հարցին: Կաղեւորների կուսակցության առաջնորդ Միլյուկովը հայտարարեց. «Ռուսաստանը, որը հայերին ինքնավարություն էր խոստացել Թուրքիայում դեռ թուրքական ռեժիմի ժամանակ, պարտավոր է իրականացնել իր խոստումն այժմ, երբ հայկական վիլայեթները մեծ մասամբ գտնվում են իր ձեռքում» [21]: Մակայն պետք է նշել, որ Միլյուկովը, որն իսկապես շատ զգույշ և ճկուն քաղաքական գործիչ էր, այս հայտարարությունն անելիս առաջին հերթին առաջնորդվում էր իր կուսակցական և անձնական շահերով, քան հայերի ճակատագրից ելնելով:

Միլյուկովը և նրա համախոհները Հայկական հարցում օգտագործում էին կառավարության սխալներն ու բացթողումները՝ իրենց հակառակորդներին հարված հասցնելու նպատակով: Նա, ինչպես շատ քաղաքական գործիչներ, միշտ չէ որ նույն ընդդիմությունում էր որոշակի քաղաքական հարցերում: Եթե 1914-1916թթ. Միլյուկովն առում էր մի բան, ապա 1917թ. Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնում՝ այլ բան [22]:

Բնական է, որ Մազոնովը, որպես արտաքին գործերի նախարար, չէր կարող նման որոշակի և բացահայտ հրապարակային հայտարարություններ անել, քանի որ դրանից հետո կզաղարեր կառավարության անդամ լինելուց: Նա իրավունք ուներ հրապարակայնորեն արտահայտել միայն կառավարության տեսակետը, սակայն Մազոնովը փորձեց արտահայտել իր անձնական մտտեցումները Հայկական հարցում, որը շարադրեց կառավարությանն ուղղված իր ծավալուն զեկուցագրում: Այս զեկուցագիրը կազմելու ժամանակը պետք է համարել 1916թ. հունիսի վերջը - հուլիսի սկիզբը [23]:

Մազոնովը զեկուցագիրը սկսում է բավականին ծավալուն նախաբանով, որտեղ մատնանշում է Ռուսաստանի հետևորդական արտաքին քաղաքականության Հայկական հարցում և նշում է հայերի տեղն ու դերը այդ քաղաքականության մեջ: Այնուհետև նա արտահայտում է հետևյալ կարևոր միտքը. «Արտաքին գործերի նախարարությունը դեռ այն ժամանակ (նկատի ունի Առաջին աշխարհամարտից առաջ) գերազանց գիտակցում էր, թե ինչ դեր կարող են խաղալ հայերը մեր Թուրքիայի հետ բախվելու դեպքում, և նախարարությունը հաճելի պարտականություն է համարում նշել, որ չի սխալվել իր հաշվարկներում» (Ա.Մ.) [24]: Ելնելով վերը նշվածից, Մազոնովը գտնում է, որ հայերին օգնելու ոչ միայն Ռուսաստանի բարոյական պարտքն է, այլև թելադրվում է Ռուսաստանի անմիջական շահերով:

Այս զեկուցագրով նա փաստորեն կոչ էր անում վերջ տալ Հայկական հարցում «զիզզագների քաղաքականությանը», որը կապված էր հայանպաստ և հակահայկական հոսանքների պայքարի հետ: Նա առաջարկում էր մշակել միասնական ծրագիր և որպես փոխզիջումային տարբերակ ներկայացնում էր 4 կետից բաղկացած իր ծրագիրը: Առաջին կետով Մազոնովը նախարարների խորհրդին հիշեցնում էր պատերազմից առաջ հայերին տրված խոստումների մասին: Մյուս կետով նա հիմնավորում էր, որ հայերին օգնելու բխում է Ռուսաստանի շահերից: Բացի դրանցից նախարարը գտնում էր, որ հայերն իրենց հավատարմությամբ արժանի են ռուսական իշխանության վստահությանը, և կարևորում է նաև հայերի դերն ապագայում՝ Արևմտյան Հայաստանի կառավարման ժամանակ, ինչպիսի կառավարման ձև էլ այն ընդունելը:

Այտուղ Մազոնովն ընդգծում է, որ սխալ է կարծել, թե հայերն իրենց դերն արդեն կատարել են և սպառվել նրա կարծիքով հայերը դեռևս կարևոր նշանակություն ունեն, ուստի չպետք շուտ հրաժարվել նրանցից:

Զեկուցագրի բովանդակությունից դժվար չէ նկատել, որ փաստաթղթի տվյալները մեծ մասամբ հայերի կողմից տրամադրված նյութեր են: Այն փաստում է, որ ռուսական տեղական իշխանությունների և հայերի միջև կար լարվածություն, և հաճախակի էին բախումները, որոնք մեծ վնաս էին հասցնում Ռուսաստանին, քան հայերին, քանզի վերջիններիս տրամադրվածության փոփոխությունը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Ռուսաստանի համար: Ցավոք այս զեկուցագիրը չկատարեց իր դերը, և Մազոնովի հույսերն ու ծրագրերը չիրականացան, ընդհակառակը՝ կարելի է ենթադրել, որ հենց այս զեկուցագիրը վերջակետ դրեց Մազոնովի քաղաքական կարիերային:

«Ռուսաստանի ռազմավարության նպատակն է, - նշել էր Մազոնովը, - հասնել Կ. Պոլսի և նեղուցների տիրապետմանը, երբ ունենալ դեպի տաք ծովերը» [25]: Հայերի դերն այս ռազմավարական խնդրում տակտիկական հարց էր՝ Պատկերավոր ասած՝ Արևմտյան Հայաստանը և արևմտահայերը Ռուսաստանի համար այն ցամաքային «բանալին» էին, որով ռուսները փորձում էին բացել նեղուցներն ու Կ. Պոլսի դռները:

Մազոնովից հետո իրար հաջորդեցին մի քանի արտաքին գործերի նախարարներ, որոնք, անշուշտ, իրենց տաղանդով զիջում էին նրան: Այնուհայտ էր, որ Ռուսաստանն աստիճանաբար ավելի էր խրվում ճգնաժամի մեջ, և կառավարության համար Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը նահանջեցին հետին պլան, իշխա-

նախնականներն ի վիճակի չեղան ամգամ լուծել պետության առջև ծառայած կենսական հարցերը, ինչն էլ տեղիք տվեց հեղափոխական ցնցումների:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

[1] <i>Игнатъев А.В. С.Ю. Витте-дипломат. М., 1998, с.59.</i>	[12] Նույն տեղում:
[2] <i>Тунян В.Г. С. Сазонов и армянский вопрос. Ереван: Диалог, 1997, с. 28.</i>	[13] Նույն տեղում, էջ 380:
[3] <i>Հարությունյան Ա., Ցարական և ժամանակակից կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճած տերիտորիայում 1915-1917թթ., Բաժնիք Հայաստանի արխիվների, Ե., 1971, էջ 160:</i>	[14] Նույն տեղում:
[4] <i>Մրտինյան Ա., Հայաստանը 1914-1917, Ե., 1969, էջ 269:</i>	[15] Նույն տեղում, էջ 367:
[5] <i>Чалхушян Г. Красная книга, Р-Д., 1919, 105 с.</i>	[16] Նույն տեղում:
[6] <i>Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. Е., 1971, 419 с.</i>	[17] Նույն տեղում, էջ 399:
[7] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Е., 1971, 31 с.</i>	[18] <i>Армянский вопрос в Гос. Думе. — Армянский вестник, Ереван, 4, 1916, с. 1.</i>
[8] Նույն տեղում, էջ 316:	[19] Նույն տեղում, №8, էջ 1:
[9] <i>Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. Е., 1971, 419 с.</i>	[20] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Ереван, 1971, с. 366.</i>
[10] <i>Арутюнян А.О. Кавказский фронт 1914-1917 гг. Е., 1971, с. 319.</i>	[21] <i>Тунян В.Г. С. Сазонов и армянский вопрос. Ереван: Изд-во "Диалог", 1997, 6, с. 29.</i>
[11] <i>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1823), խմբ. Ջ. Կիրակոսյան, Ե., 1972, էջ 379:</i>	[22] <i>Докладная записка мин. Ин. Дел С. Сазонова Совету Министров по Армянскому вопросу. — Армянский вестник, (возобновленное издание). Ереван, 3-4, 1998, с. 188.</i>
	[23] Նույն տեղում, էջ 190:
	[24] Նույն տեղում:
	[25] Նույն տեղում:

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԶԻՆ ԸՄԱՎՔԱՆԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐԸԱՀԱՅԱՍՏԱՆԸ**

*Մարության Ա.*

« ԳԱԱ հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ »

**Марукян А. Внешняя политика Временного правительства и Турецкая Армения.** После Февральской революции власть в России перешла к Временному правительству, которая находилась под непрерывным дипломатическим давлением со стороны союзных держав. Временное правительство сделало несколько попыток восстановить положения соглашения Сайкса-Пико в отношении раздела Турции и в частности — Западной Армении. Однако соотношение сил уже явно было на стороне Англии и Франции, которые диктовали условия России. Союзниками был отклонен также предложенный Россией вопрос о предоставлении Западной Армении права на самоопределение. За 8 месяцев своего существования Временное правительство не смогло осуществить принятые решения и завершить важные внешнеполитические инициативы.

**Marukian A. The Foreign policy of Temporary government and Turkish Armenia.** After the February revolution the power in Russia passed to Temporary government, which was upon unbroken diplomatic pressure of allied powers. The Temporary government made some attempts to restore the positions of Saics-Pico agreement about the division of Turkey and particularly of the Western Armenia, but the allied powers declined even the question of autonomy of the Western Armenia, suggested by Russia. The Temporary government could not realize any Foreign policy decision or initiative.

Փետրվարյան հեղափոխությունից մի քանի օր առաջ շարական կառավարության վերջին արտաքին գործերի նախարար Պեղկոմսյանը առաջ քաշեց 1915-1916թթ. համաձայնությունների, այդ թվում Մայրս-Պիկոյի պայմանագրի, իրական ապահովման հարցը: 1917թ. փետրվարի 21-ին Նիկոլայ II-ին ուղղված զեկուցագրում նախարարը գրում է. «Որևէ ձևով չնվաստացնելով նեղուցների մասին փաստաթղթերը, այնուամենայնիվ, գտնում եմ սխալ կիսեր կարծել, որ միայն դրանցով մենք ի վիճակի ենք իրականացնել մեր գլխավոր ձգտումները և ցանկացած պարագայում կտանանք այն ամենը, ինչ նախատեսված է փաստաթղթերում: Անկասկած է, որ պատերազմի աշխարհագրական քարտեզի ներկա վիճակը խաղաղության բանակցությունների սկսման պահին կունենա վճռական նշանակություն այդ քաղաքական ծրագրերը կյանքի կոչելու համար: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում տիրանալ նեղուցներին նախքան խաղաղությունը կամ էլ այնքան մոտենալ դրանց, որ հարցի լուծման ժամանակ կարողանանք պատշաճ ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Առանց այս ամենի մենք դժվար թե երբևէ կտանանք Կ. Պոլսը և նեղուցները, և համաձայնությունը դրանց մասին կդադարանա սովորական թղթի կտոր» [1]: Այս հավաժից պարզ երևում է, որ ինչպես ցարական, այնպես էլ ժամանակակից կառավարությունը պատերազմում առաջնահերթ նպատակ էր դրել տիրանալ նեղուցներին և Կ. Պոլսին, սակայն Պեղկոմսյանը մտախառնություն ուներ, որ դաշնակիցները կարող են հետագայում հրաժարվել այս պայմաններից, ուստի առաջարկում էր պարզապես նվաճել նեղուցները: Խնդիրը նրանում էր, որ դաշնակիցներն այս քայլը կդիտեին որպես Ռուսաստանի կողմից իր պատերազմը շուտ ավարտելու փորձ և դժվար թե հանդուրժեին այն: Այս ույն գաղափարը հետագայում արտահայտում է նաև ժամանակակից կառավարության արտաքին գործերի նախարար Սիլյուսյանը: Կաղեկների կուսակցության համագումարում նա ընդգծեց, որ Կ. Պոլսի և նեղուցների գրավումն իր քաղաքականության հիմնական խնդիրն էր, որը «կարմիր թելի» մասն անցնում էր Սիլյուսյանի բոլոր բանակցությունների ժամանակ, սակայն նշում է, որ պայքարի իր բոլոր փորձերն անպատիվ էին այն տեսակետի կողմնակիցների համար, ովքեր գտնում էին, որ Ռուսաստանը դաշնակիցների առջև պետք է հրաժարվի նեղուցներին տիրանալու գաղափարից: [2] Այս երկրորդ տեսակետի կողմնակիցները գիտնել էին հաշտվողական դիրք՝ ստեղծված պայմաններից ելնելով և գտնում էին, որ Ռուսաստանն ի վիճակի չէ պահանջել համաձայնագրերով իրեն հասանելիքը և ավելի լավ է հրաժարվի այդ մտքից, քան թե անպատիվ վեճի մեջ մտնի դաշնակիցների հետ, դրանով իսկ վատթարացնելով իր հարաբերությունները նրանց հետ: Պարտավորական այս տեսակետը հարված էր հասցնում նաև Արևմտյան Հայաստանին, քանի որ համաձայնագրերից մեկն էլ Մայրս-